Գետաթաղ

Բնակչություն՝ 194

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 132 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 28 կմ,
Նարձրությունը ծովի մակերևույթից՝ 1470 մ,

Գյուղը գոյություն է ունեցել միջին դարերից և մտնում էր Սյունիք աշխարհի Ծղուկ գավառում: Գյուղի բնակիչների մեծ մասի նախնիները եկել են Ղարաբաղի, Նախիջևանի և Խոյի ու Սալմաստի գյուղերից տարբեր ժամանակներում: Գյուղը միջինդարերում եղել է գրչության կենտրոն, հասել են 17-րդ դարի 1-ին երեսնամյակում այստեղ գրված մի քանի հայերեն ձեռագրեր: 18-րդ դարում կազմված հարկացուցակով Տաթևի վանքին վճարում էր տարեկան 800 դահեկան պտղի հարկ:
Գյուղում կա 1702թ-ին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին: Գյուղի մոտակայքում են գտնվում Բաբայավար, Բհարլու, Թամբալ, Խաչի հողեր գյուղատեղիները: Այստեղ են ծնվել պրոֆեսոր Ի. Առուստամյանը, բանասեր Բաստամյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 81 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 195գլուխ,
- խոզեր՝ 3գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 33:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 35 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1312 հա, այդ թվում՝
• Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1036 հա, որից՝
- վարելահող՝ 35 հա, բազմամյա տնկարկ՝ 7 հա, արոտ՝ 882 հա, այլ հողատեսք՝106 հա
• բնակավայրերի հողեր՝ 27 հա,
• արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
• էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
• հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 13 հա,
• անտառային հողեր՝ 229 հա, որից անտառածածկ՝ 229 հա
• ջրային հողեր՝ 2 հա